և սակաւ սակաւ, և լեալ բազմութեամբ յայտնապէս
ել ի վերայ նորա, և ճակատեցան ընդ միմեանս մե-
ծաւ յարձակմամբ ի դաշտն որ ասի Եբլղբն։ Եւ Հա-
սանիքն, քանզի անհուն գոլով քաջութեամբ և բազ-
մութեամբ զօրուն, պարտէին[1]) զնա անասելի կոտոր-
մամբ և զաւարս և զկարասիս ջորովք և ձիովք բար-
ձեալ զօրացն՝ առեալ ի բանակս իւրեանց տանէին։ Եւ
Մուրթազին խոցեալ Գ ձի՝ ստէպ փոխէին և անդէն
մազապուր սակաւ արամբք փախեալ և ապա հովա-
նայր, ասէ, ամօթով հեռաբնակ մերձ Ամթայ քաղա-
քին։ Եւ յերկուց կողմանց լինէր կոտոր[ած] իբրեւ
արանց Ի[Ռ]-աց։ Եւ յորժամ լսէին և զայս որ ասա,
նա՛ և վէզիրն զայրանայր բարկանայր ի վերայ Մուր-
թազին[2]) և կայր ի տագնապի։ Դարձեալ գրէ նախա-
տինս նմա հանդերձ յուսադրանօք թէ Ի կենդանութիւն
կայսեր մերում դրամ մեզ չէ պակաս և գանձ, և ոչ
ևս զօրականս պակաս։ Դարձեալ միւսանգամ հայեա՛ց
ի քեզ, և իմաստութեամբ և հնարիւք ժողովեսցես արս
հազարս և բիւրս որչափ և կամեսցիս՝ ի սահմանս և
ի պետութիւնս Տիգրանակերտին, զամենայն միանգա-
մայն գտցես. նաեւ փաշայքն որ ասէին առաքեալ
իմ՝ քեզ օգնեսցեն. ողջ լե՛ր։ Եւ նայ հնարէր և ոչ
կարէր, կամէր ստանալ անուանս և ոչ դիմանէր, փա-
փաքէր մեծ փառաց և ոչ յառաջէր, տեսանէր զզօրս
իւր պատրաստեալ եւ ի նոցունց առաւել երկնչէր,
խնդրէր զմահ և ոչ հասանէր։ Քանզի սաստկանայր
հրաման թագաւորին՝ Զի՞ նստիս, զի՞ յամառիս, զի՞
յուլանաս, զի՞ երկնչիս, ե՛լ ի վերայ Հասանին եւ
պարտեա՛յ զնայ։ Վասնզի վէզիրն ոչ կարէր գնալ
յերկիւղէ եւ ի կարծեաց աստ եղեալ զօրացս, զի ի
ճանապարհին գուցէ սպանցեն եւ կամ ընդ նոսա լի-

1) պարտէր։ 2) մուրթուզին։